Ժ. Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԵՂԱԴԻՐՈՒՄ

Երևանից Գառնի տանող ճանապարհին գտնվող Գեղադիր գյուղի հարավ-արևմտյան մասում, մի հնագույն ամրոցից ոչ հեռու, ցածրադիր բլրի վրա, 1963 թ. ամռանը բնակարանի հիմքեր փորելիս պատահաբար բացվել էր երկու սարկոֆագ։ Հետագայում մենք հայտնաբերեցինք ևս երկու սարկոֆագ։ Այդ սարկոֆագները պատրաստված են ամբողջական սև և կարմիր գույնի տուֆ քարերից, ունեն երկարավուն ոչ կանոնավոր քառանկյան ձև, փորված մասի երկարությունը 1—1,30 մետր է, լայնությունը 0,55—0,65 մետր, խորությունը 0,34—0,45 մետր, պատերի հաստությունը 0,10—0,15 մետր, սարկոֆագները ծածկված են 16—20 սմ հաստությամբ նույն գույնի ամբողջական քարով։ Սարկոֆագներից երեքը (№№ 1, 2, 4) ուղղված են արևմուտքից արևելք, իսկ մեկը (№ 3) հյուսիսից հարավ։ Մեզ հաջողվեց որոշել միայն մի կմախքի դիրքը, որը քիչ ավելի լավ էր պահպանվել։ Ընդհանրապես սարկոֆագների ծավալը ստիպել է դիակները թաղել կուչ եկած դրությամբ։

№ 3 սարկոֆագում (նկ. 1) հանգուցյալը թաղված էր աջ կողքի վրա, գլուխը հյուսիսային կողմում, ծնկները խիստ ծալված վիճակում, ձեռքերը կրծքին դրված։

Նկ. 1. № 3 սարկոֆագը պեղված վիճակում, կողքին երևում է ծածկի սալը

Սարկոֆագներում հայտնաբերված նյութերը թեև փոքրաթիվ են, սակայն իրենց ինքնատիպությամբ մեծ հետաքրքրություն են ներկայացնում։

Վաղ շրջանի նյութերի մեջ իրենց նշանակությամբ խիստ ուշագրավ են կոնգլոմերատ և պորֆիրիտ քարից պատրաստված սկահակները։ Գեղադիրում № 1 սարկոֆագից հայտնաբերված կապտավուն պորֆիրիտից կերտած սկահակը (վաղան) չափերով մեծ չէ (բերանի բացվ. 14,5 սմ, բարձ. 8 սմ), ունի փռված տեսք, կիսագնդաձև իրանը վերջանում է ուղիղ կտրված պսակով (նկ. 2)։ Սկահակը հենվում է գլանաձև, ներքևում աստիճանաբար լայնացող ոտքի վրա, որը տակից կոնաձև փորված է։ Երևում են սուր գործիքի հետքերը։ Բարձրադիր ոտքի վրա հենվող հիանալի մշակված այդ սկահակը շատ հաճելի տեսք ունի։



Նկ. 2. № 1 սարկոֆագից հայտնաբերված պորֆիրիտից պատրաստված սկահակ

Պորֆիրիտից և կոնգլոմերատից պատրաստված սկահակների պսակի, իրանի, ոտքի մասեր հայտնաբերվել են Գառնիում, Արմավիրում, Հացավանում[1], Սևանում, իսկ ամբողջական մի այլ սկահակ հայտնի է Լեռնային Ղարաբաղից (պահվում է Ստեփանակերտի երկրագիտական թանգարանում)։

Իրենց ձևով Գեղադիրի սկահակին մոտենում են Հացավանից գտնված (ՊՊԹ 2293/12, 2293/1) կապտավուն պորֆիրիտից պատրաստված սկահակի շրթի բեկորները, դրանք ներսից հատակից դեպի վերև՝ ուղղահայաց, և դրսից աղեղնաձև լինելու պատճառով աստիճանաբար լայնանում և ավարտվում են ուղիղ կտրված պսակով (լայն. 1 սմ)։ Գեղադիրի սկահակի ոտքին նմանը գտնվել է Արմավիրում (ՊՊԹ 2256/13)։ Այն աստիճանաբար լայնանալով կոնաձև տեսք է ստանում, տակի փորվածքի վրա նորից երևում են սուր գործիքի հետքեր։ Գեղադիրի նկարագրված սկահակն իր դուպահեռները չունի նաև վաղ

[1] Գ. Տիրացյան, Հացավան ամրոցի 1962 թ. պեղումները, «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1963, № 12, էջ 110, նկ. 4,2։

հայկական խեցեղեն արտադրանքի մեջ։ Ջնայած հայտնի են հելլենիստական շրջանի ուղիղ կտրված շրթով կավե թասեր, ճրագներ և այլ անոթներ, սակայն դրանք բոլորովին այլ ձև ունեն։ Իսկ Հացավանից գտնված սկահակի բեկորների նման, աստիճանաբար լայնացող պսակով, խեցեղեն ընդհանրապես հայտնի չէ։ Մեր կարծիքով սկահակների այս խումբն ամենահինն է, իսկ սկահակների մյուս ձևերը հանդիսանում են վերջիններիս հետագա զարգացումը։

Մեզ հայտնի պորֆիրիտի սկահակների բեկորների քննությունը ցույց է տալիս նրանց աստիճանական զարգացումը։ Մյուս խումբը տարբերվում է նախորդից նրանով, որ պսակը դեպի ներս լայնանալով հատակի հետ անկյուն է կազմում։ Սև և կանաչավուն-կապտավուն բծերով պորֆիրիտից պատրաստված հիանալի մշակումով այդպիսի մեծ ու փոքր բեկորներ գտնվել են Արմավիրից (ՊՊԹ 2287/3), Հացավանից (ՊՊԹ 2259/8)։ Լեռնային Ղարաբաղում հայտնաբերված մոխրագույն-կապտավուն քարից պատրաստված սկահակը նույնպես այս խմբին է պատկանում (նկ. 3)։ Վերջինս Գեղադիրի սկահակից տարբերվում է իր դեպի ներս լայնացող պսակով և ոտքի տակի ակոսի մշակվածությամբ (բարձր. 8 սմ, պսակի տր. 16 սմ, ոտքի տր. 10 սմ)։ Լավ մշակված այս սկահակը ավելի դեղեցիկ տեսք ունի, քան Գեղադիրինը։

Այս խմբի համար ևս վառ հայկական խեցեղենի մեջ մեզ չի հաջողվել զուգահեռներ գտնել։

Նկ. 3. Լեռնային Ղարաբաղից հայտնաբերված կոնգլոմերատից պատրաստված սկահակը

Մյուսը՝ Գառնիից հայտնաբերված սկահակի բեկորն է, պահպանվել է հատակը ոտքից սկսած, շրթի հետ միասին (ՊՊԹ 2099/45)։ Սա նույնպես նախորդների նման դրսից կլոր է, բայց ներսից շուրթն այնքան է դուրս եկել, որ հատակի հետ կազմել է սուր անկյուն։ Վերջինս հետաքրքիր է նաև նրանով, որ ժամանակին այն կոտրվել է և անցքերի միջոցով, խեցեղենի օրինակով կարկատվել։ Հայտնի է դեպի ներս լայնացող պսակով, մեծ քանակությամբ հելլենիստական շրջանի գունաղարդ խեցեղեն, որոնց շրթերը շատ նման են Գառնիի վերոհիշյալ սկահակի պսակին։

Միանգամայն տարբեր ձև ունեն սկահակների մյուս բեկորները։ Սրանց պսակները լայնանում են ոչ թե դեպի ներս, այլ դեպի դուրս։ Ներսից ունեն ուղղահայաց տեսք, պսակը հորիզոնական ձևով դեպի դուրս է լայնանում (2,5—3 սմ), որը անկյուն կազմելով միանում է հատակին։ Այդպիսի բեկորներ գտնվել են Արմավիրում. դրանք պատրաստված են մոխրագույն սև բծերով պորֆիրիտից՝ մեկը մասսիվ, մյուսը ավելի նուրբ մշակմամբ։ Վերջինս և նույն քարից ու նույն մշակումով պատրաստված ոտքը (ՊՊԹ 2256/29), հավանաբար, եղել են նույն սկահակի մասերը։ Ոտքը շատ ցածր է, այն աստիճանաբար նեղանալով, շեշտակի անցումով միանում է վերին մասին։ Ոտքը տակից գոգավորություն ունի, որը լավ փայլեցրած է։

Քիչ այլ ձև ունի Սևանից հայտնաբերված կանաչավուն, մոխրագույն բծերով կոնգլոմերատից պատրաստված սկահակի մեծ բեկորը, պահպանվել է հատակը ոտքի մոտից շրթի հետ միասին։ Այն ներսից աստիճանաբար բարձրանալով անցնում է հորիզոնական դեպի դուրս լայնացող պսակին, որը նախորդներից բարակ է և դրսից աղեղնաձև անցումով միանում է ուղիղ հատակին։

Այս սկահակների զուգահեռները հանդիպում ենք նաև գունազարդ խեցեղենի մեջ։ Շրթերի այս ձևերը հանդիսանում են ուշ աքեմենյան և հելլենիստական խեցեղենի բնորոշ ձևեր։

Ինչպես տեսնում ենք, Գեղադիրի սկահակը իր ձևով ամենահինն է և այն կարելի է թվագրել V—IV դդ.։ Քննությունը ցույց է տալիս, որ զարգացումն ընթացել է երկու ուղղությամբ։ Մի դեպքում անփոփոխ է թողնվել սկահակի արտաքինը, ոտքից վեր և փոփոխությունը կատարվել է պատի, պսակի ներսի մասում, մյուս դեպքում՝ հակառակը, փոփոխության է ենթարկվել պսակի ու պատի արտաքին կողմը։ Կան նաև կոնգլոմերատից պատրաստված ուրիշ ձևի անոթներ։

Արմավիրից գտնված սև բծերով կանաչավուն երանգ ունեցող քարից պատրաստված, նույնպես հիանալի մշակումով (ՊՊԹ 2287/13), չորս բեկոր ունեն բոլորովին այլ ձև և պատկանում են հավանաբար այլ տիպի անոթի։ Դրանցից երկուսը հատակի մաս են, հավասար հաստությամբ, տափակ, որոնք միացել են ուղիղ պատին։ Մյուս երկուսը՝ աստիճանաբար դեպի վեր նեղացող, բոլորաձև պսակով ուղիղ պատեր են։ Ակներևաբար սրանք փռված, ուղիղ անկյուններով ափսեի կամ նման մի այլ անոթի մասեր են, որոնցից շատ կան Պերսեպոլսում[2]։

Քարակերտ անոթներ՝ ոտքով և առանց ոտքի սկահակներ, պնակներ, խորը մեծ թասեր, հավանդներ, ալաբաստրներ և այլ իրեր մեծ քանակությամբ հայտնի են Իրանից՝ Պերսեպոլսից, Շուշից, ինչպես և Սիրիայից[3]։ Դրանք պատրաստված են կարծր քարից՝ գրանիտից, կոնգլոմերատից, պորֆիրիտից, օնիքսից և այլ նյութերից։ Այդ անոթները, որոնք բոլորն էլ աղերսվում են աքեմենյան մշակույթի հետ, պահվում են աշխարհի տարբեր թանգարաններում (Փարիզ, Բեռլին, Լոնդոն)։ Վերջիններիս մի մասը, մասնավորապես ալաբաստրները հայտնի էին Եգիպտոսում, որտեղից և ժառանգել են աքեմենյանները, իսկ սկահակների մի մասը իր վրա կրում է պարսից թագավորների, մեծ մասամբ Դարեհի, Քսերքսեսի և Արտաքսերքսեսի արձանագրությունները։

Տարբեր հավաքածուներով պահվող այդ քարե անոթներն ու բեկորները ուսումնասիրել է Ջորջ Փոսնները, տալով դրանց ժամանակը, հայտնաբերման վայրը և արձանագրությունների վերծանությունը[4]։ Սակայն նրա հավաքածները հիմնականում ալաբաստրներ են, որոնք գործածվել են օծանելի նյութերի համար[5]։ Քարե սկահակներ գտնվել են Տաքսիլայում, որոնք նույնպես ունեն

---

[2] Schmidt Erich F., Persepolis, II, Chicago, 1957, տախտ. 53,2,5, 63,1։

[3] Posener Georges, La Premiere domination Perse en Egypte, Le Caire, 1936, էջ 139, № 38—42։

[4] Նույն տեղում, էջ 137—151։

[5] Burchardt, Max, Datierte Denkmaler der Berliner Samlung aus der Achamenidenzeit. Zeitschrift für agyptische Sprache und Altertumskunde, Bd. XLIX (1911), Leipzig.

բարձր ոտքեր և դեպի դուրս փռվող պսակներ[6]։ Քարե անոթներ հայտնի են նաև Մինգեչաուրից, սակայն դրանք տուֆից են և ձևով տարբերվում են[7]։

Հայաստանում հայտնաբերված քարե սկահակներն իրենց զուգահեռներն ունեն Պերսեպոլսից գտնված քարե բարձր ոտքով վազաների մեջ[8], որոնք սակայն ձևերի որոշ մանրամասներով տարբերվում են առաջինից։ Հայկական սկահակները ձևերով ավելի պարզ են, հասարակ։ Հայաստանում գտնված պորֆիրիտից և կոնգլոմերատից պատրաստված սկահակները աքեմենյանների օրինակով պատրաստվել են տեղական հումքից։

Կոնգլոմերատից ու պորֆիրիտից պատրաստված սկահակների բեկորները Գառնիում, Արմավիրում ու Հացավանում հանդիպում են վաղ հայկական և երբեմն էլ հելլենիստական խեցեղենի հետ։ Ըստ երևույթին, քարե այդ անոթները սկիզբ առնելով վաղ հայկական շրջանում, իրենց գոյությունը պահպանել են նաև հելլենիստական շրջանում։ Այսպիսով նրանք կարող են թվագրվել V—III դդ.։

Այն հարցին, թե որպես ի՞նչ են ծառայել այդ սկահակները, առայժմ ճիշտ պատասխան տալ հնարավոր չէ։ Կարելի է ենթադրել միայն, որ դրանք արարողությունների ժամանակ ծառայել են իբրև հանդիսավոր սպասք և ունեցել են պաշտամունքային նշանակություն։

Խեցեղեն միակ առարկան № 3 սարկոֆագից գտնված ձեռքով պատրաստված սափորն է (նկ. 4)։ Այն ունի գնդաձև իրան, հարթ հատակ, նեղ ու կարճ վիզը վերջանում է դեպի դուրս լայնացող երեքնուկ հիշեցնող պսակով։ Կլոր կանթը մի ծայրով կրպած է շրթին, որի երկու կողքերից ելուստներ կան, մյուսով՝ հենված է ուսին։ Սափորը պատրաստված է աղյուսագույն խոշորահատիկ ավազախառն կավից։ Կարմրավուն անգոբով պատած մակերևույթը փայլեցված է։ Գեղադիրի սափորին իր ձևով շատ նման է պետական պատմական թանգարանում պահվող մի սափոր (ՊՊԹ 766/128), որը նույնպես ձեռքով է պատրաստված, միայն այստեղ բացակայում են պսակի վրայի կանթի կողքերին եղած ելուստները։

Նկ. 4. № 3 սարկոֆագից հայտնաբերված օյնոխոյան

Երեքնուկի տերև հիշեցնող պսակով անոթներ՝ օյնոխոյաներ հայտնի են տարբեր երկրներից, որոնք ամենատարածված և ամենից երկար պահպանված

[6] Marshall J. Taxila, Cambridge, 1951, տախտ. 140 № 48, 49։

[7] С. М. Казиев, Археологические раскопки в Мингечауре, Материальная культура Азербайджана (МКА), I, Баку, 1949, նկ. 11, 12.

[8] Persepolis, II, տախտ. 50, 51, 2a, 2b, 52, 1, 2a, 2b, 2c, 57, 58, 59։

ձևերից են եղել։ Հայաստանի տերիտորիայում այն գալիս է դեռևս ուրարտական շրջանից և հարատևում մինչև ուշ միջնադարը։ Այսպիսով, վերը նկարագրած օյնոխոյանների նախատիպը պետք է որոնել ուրարտական գինու սափորների մեջ։

Օյնոխոյանների բազմաթիվ նմուշներ հայտնաբերվել են նաև Վրաստանում[10] և Ադրբեջանում[11]։ Ինչ վերաբերվում է Գեղադիրի օյնոխոյայի պսակի վրայի կանթի կողքերին առկա ելուստներին, ապա այդպիսիք հանդիպում են Պերսեպոլսում[12], որոնց պսակը սակայն ավելի նման է Արմավիրից հայտնաբերված առանց ներկի օյնոխոյաներին։

Նույն (№ 3) սարկոֆագից գտնվել են նաև երկու քառանիստ նետասլաքներ և մեկ դաշույնի դաստակ, որի վրա պահպանվել է փայտի կամ ոսկրի ամրացման գամերը։ Նետասլաքներից մեկը քիչ ավելի մեծ է (երկ. 7,5 սմ) մյուսից (երկ. 3 սմ), երկուսի ծայրերն էլ քիչ թեքի են (նկ. 5)։ Քառանիստ նետասլաքներ գտնվել են նաև Գառնիում, անտիկ շերտից[13]։ Գեղադիրի քառանիստ նետասլաքները այդ տիպի նետասլաքների հնագույն օրինակների թվին են պատկանում. այդ ձևի նետասլաքները երկար ժամանակ գործածության մեջ են մնում, դրանք հանդիպում են նաև միջնադարում։

Ձևով ուրարտական սափորներ հիշեցնող Գեղադիրի օյնոխոյան և նույն սարկոֆագից գտնված նետասլաքները թվագրվում են մ. թ. ա. IV—III դդ.։

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում ապարանջանները։ № 2 սարկոֆագից գտնված բրոնզե ապարանջաններից մեկը պատրաստված է կլոր լարից։ Ներճկված մեջքով այդ ապարանջանի ծայրերին ակոսներով ու գծիկներով տրված են առյուծի ոճավորված գլուխների ձևեր (տախտ I, նկ. 1)։ Այդպիսի մի ապարանջան էլ գտնվել է Գառնիում սալարկղային թաղումից (տախտ. I, նկ. 2)։ Երկու օրինակներն էլ ներճկված մասում ավելի բարակ են։ Գեղադիրի ներճկված մեջքով ապարանջանը քիչ ավելի հաստ լարից է պատրաստված և ավելի խնամքով մշակված։

Ներճկված մեջքով ապարանջանները նորություն չեն Հայաստանի համար։ Այդպիսի մեծ թվով ապարանջաններ հայտնի են Ջրառատից, որոնցից մի քանիսն ունեն կենդանու ոճավորված գլուխների նման ծայրեր (օձի)։ Ջրառատի

---

[9] Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, էջ 181; Б. Б. Пиотровский, Кармир Блур. III, Ереван, 1955, տախտ. VIII; Leman Haupt Materialen zur alteren geschichte Armeniens und Mesopotamiens. Abhandlungen der Koniglichen Gesellschafte der Wissenschaften zu gotingen Philologisch-Historische Klasse. B. XI, № 3, 1906, էջ 45, նկ. 82։

[10] Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети. Тбилиси, 1941 տախտ. XV; Б. А Куфтин. Материалы к археологии Колхиды. II, Тбилиси, 1950, էջ 66 և հետ. տախտ. $19_{1,3}$, $20_{1,2}$; Лордкипанидзе О., Ремесленное производство и торговля в Мцхета в I—III вв н. э., Труды Тбилисского государственного университета. т. 65. 1957, էջ 118; Ниорадзе Г., Раскопки в Алазанской долине. Тбилиси, 1940, տախտ. XIV, j, k.

[11] О. Ш. Исмизаде, Ялойлутепинская культура. Баку, 1956, տախտ. I_4, VII_3, XII_6, XIV_{11}, $XVI_{1,2,8}$, XVI_2, XXX_4; Рзаев Н. И., Художественная керамика Кавказской Албании. Баку, 1964, նկ. 55, 57, 58; Пассек Т., Джафарханский могильник. ВДИ, 1946, № 2, նկ. 16։

[12] Persepolis, II, տախտ. $71_{,6}$, $72_{,10}$.

[13] Б. Н. Аракелян. Гарни, II, Ереван, 1957, նկ. 12։

ապարանջանները Գ. Տիրացյանի և Հ. Մնացականյանի կողմից թվագրվում են V—IV դդ[14]։

Գառնիում[15] վերջին տարիներս մեծ քանակությամբ նման ապարանջաններ են հայտնաբերվել։ Դրանցից մի մասի ծայրերը զարդարված են օձանման գլուխներով, իսկ մյուսները մերձենում են Գեղադիրի ապարանջաններին, սակայն առանց զարդերի (տախտ. I, նկ. 4)։ Նույնանման ապարանջաններ են հայտնի Կարմիր բլուրի քաղաքային մասից[16], Դվինից (ՊՊԹ 1917/180), •ձագլուխ ծայրերով՝ Անիից (ՊՊԹ 4469), Կամոյի շրջանից (ՊՊԹ 20/172), Բջնիից (ՊՊԹ 319/7), Աղբաշից (ՊՊԹ 1400), Նոյեմբերյանի շրջանի Ջուջևան գյուղի V—IV դդ. դամբարաններից (տախտ. I, նկ. 3)։



Տախտակ I

Ներճկված մեջքով ապարանջաններ մեծ քանակությամբ հայտնի են Աղրբիջանից։ Դրանք բնորոշ են Մինգեչաուրի կարասային թաղումներին և թվագրվում են II—I դդ.։ Վերջիններս պատրաստված են երկու տեսակ լարից, որոնց մի մասը նման է վերևում մեր նկարագրած կլոր լարից պատրաստված անզարդ ծայրերով ապարանջաններին[17], մյուս մասը պատրաստված է տափակ լարից, որոնց վրա առանձին նմուշների վրա արված են լայնակի գծիկներ[18]։ Ապարանջանների այս տիպը տարածված ձևերից մեկն է եղել նաև

[14] А. О. Мнацаканян, Г. А. Тирацян, Новые данные о материальной культуры древней Армении, „Известия" АН Арм. ССР, № 8, 1961. էջ 72 և հետ. տախտ. 2; Г. А. Тирацян, Некоторые черты материальной культуры Армении и Закавказья V—IV вв. до н. э., „Советская Археология", № 3, 1964, էջ 66, նկ. 2,10։

[15] Б. Н. Аракелян, Նշվ. աշխ., նկ. 44 (90/50)։

[16] А. А. Мартиросян, Город Тейшебаини, Ереван, 1961, նկ. 62։

[17] С. М. Казиев, Альбом кувшинных погребений, Баку, 1960, էջ 25, տախտ. X XXVII.

[18] С. М. Казиев, О двух кувшинных и двух катакомбных погребениях. МКА, III, Баку, 1953, նկ. 4։

Վրաստանում աքեմենյան և հելլենիստական շրջաններում, ընդհուպ մինչև I դ.։ Այն հանդիպում է բազմաթիվ վայրերում՝ Թրիալեթիում, Ներոն-Դերևսիում, Ծալկայում, Դաբլագոմիում, Աբխազիայում՝ Էշերիում[19] և այլուր։ Վրաստանում հանդիպում են կլոր լարից պատրաստված առյուծի ոճավորված գլխով և անղարդ ծայրերով, մեր ապարանջաններին հար և նման, ինչպես նաև տափակ լարից զարդարուն և անղարդ կամ տարբեր մասերում զարդեր ունեցող ապարանջաններ։

Մեծ քանակությամբ նմանօրինակ ոսկե և բրոնզե ապարանջաններ հայտնի են Իրանից՝ Շոշում մ. թ. ա. IV դ. թվագրվող արքայական դամբարանում հայտնաբերվել է ոսկյա, առյուծագլուխ[20] մի ապարանջան, Ամուղարյան V դ. դանձում ոսկյա գրիֆոնի գլխով[21], Պերսեպոլսում բրոնզե ոլորված լարից պատրաստված խոյագլուխ մի ապարանջան[22]։ Այդ ձևի խոյի գլխով ոսկյա ապարանջաններ հանդիպում են նաև Կիպրոսում և թվագրվում են V և V—IV դարերով[23]։

Ներճկված մեջքով ապարանջաններն համարվում են աքեմենյան ոսկյա ապարանջանների եզրագծի (կոնտուրի) վերարտադրություններ։ Սակայն ապարանջանների այդ ձևը տարածման ավելի լայն շրջանակ է ունեցել։ Դրա օգտին են խոսում Կիպրոսից, Կովկասից և այլ վայրերից հայտնաբերված ներճկված մեջքով ապարանջանները։

Հայաստանում ապարանջաններն օձի գլուխներով զարդարելու տրադիցիան գալիս է դեռևս մ. թ. ա. I հազարամյակի սկզբներից։ Ինչ վերաբերում է առյուծագլուխ նմուշներին, ապա այն հատկանշական է ինչպես արևելյան, այնպես էլ ուրարտական արվեստին։ Այս տեսակետից հատկապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում Իզդիրից գտնված[24] ուրարտական առյուծագլուխ ապարանջանները, որոնց մեջ շատերի քանդակները մասամբ երկարուկ, ոճավորված տեսք ունեն։ Ներճկված մեջքով օձի և առյուծի գլուխներով զարդարված ապարանջանները հանդիսանալով հայկական լեռնաշխարհում գոյություն

---

[19] Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, էջ 32 և հետ. նկ. 33,1-4,34; Б. А. Куфтин, Три этапа истории культурного и этнического оформления дофеодальной Абхазии, Тбилиси, 1949, էջ 44 և հետ. նկ. 13-15, տախտ. V3–8, VI; Б. А. Куфтин, Материалы к археологии Колхиды, II, էջ 38 և հետ. նկ. 10, 53,8–12, տախտ. 6, 7, 9, 10, 12$_2$,13$_{3,5}$; Г. А. Ломтатидзе, Археологические раскопки в Мцхета, Тбилиси, 1955, էջ 59; Р. М. Рамишвили, Камарахевский могильник. Материалы по археологии Грузии и Кавказа, II, Тбилиси, 1959, նկ. 2, 11, տախտ. IV$_2$, XV$_{1,2}$, XVI$_1$, XVII$_6$, XVIII$_2$, XIX$_{10}$; Толордава В., Материалы к истории иберского царства в последние века I тысячилетия до н. э. տախտ. VI$_1$, VII$_2$.

[20] J. de Morgan, „Delegation en Perse, VIII, Paris, 1905, տախտ. 5, տես նաև Edith Porade, Iran Ancien. L'Art a l'Epoque preislamique. Paris (1963), նկարները 167 էջի վրա։

[21] O. M. Dalton, The treasure of the Oxus, London, 1927; տես նաև Edith Porade, նշվ. աշխ. նկարները 167 էջի վրա։

[22] Persepolis, II, տախտ. 89։

[23] The Swedish Cyprus Expedition, p. II, Stockholm, 1934, p. III, Stockholm, 1937, տախտ. IV, XCI, XCII.

[24] Б. А. Куфтин, Урартский „Колумбарий" у подошвы Арарата и Куро-Аракский энеолит. Тбилиси, 1944, էջ 39 և հետ. նկ. 26, 27, 28, տախտ. V; R. D. Barnett. The Urartian Cemetery at Igdyr. Anatolian Studies. vol. XIII, 1963, London, էջ 180, նկ. 32, 34,37$_{10,12,13}$։

ունեցող ավանդների շարունակությունը, հավանաբար իրենց վրա կրել են նաև աքեմենյան արվեստի ազդեցությունը։

Գեղգիրից և Գառնիից հայտնաբերված ոճավորված առյուծի և օձի գլխով ապարանջանները ինչպես իրենց հետ գտնված, այնպես էլ զուգահեռ նյութերով թվագրվում են V—IV դդ., անզարդ ծայրերով ապարանջանները՝ IV—III դդ., դրանցից մեկը (ՊՊԹ 2235/56) գտնվել է Ալեքսանդր Մակեդոնացու արծաթյա դրամի հետ։

Ինչպես տեսնում ենք Հայաստանից գտնված ներճկված մեջքով ապարանջանները ևս աքեմենյաններից հետո հարատևել են նաև հելլենիստական շրջանում։ Ինչ վերաբերում է ապարանջանների ծայրերի պատկերներին, ապա դրանցից օձագլուխները կապվում են օձի պաշտամունքի հետ[25]։ Օձը այն կենդանիներից մեկն է, որն իր զանազան հատկություններով պաշտամունքի առարկա է հանդիսացել աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդների մոտ։ Առյուծը ևս պատկանել է սրբազան կենդանիների թվին, իբրև հզորության, վեհության և գեղեցկության մարմնավորող, այն եղել է 12 կենդանակերպերից մեկը[26]։



Նկ. 5. № 3 սարկոֆագից գտնված քառանիստ նետասլաքները

Մյուսը № 4 սարկոֆագից գտնված եռանկյունաձև ապարանջանն է (տախտ. I, նկ. 5)։ Այն պատրաստված է երկաթե և բրոնզե բարակ լարերը միասին բրոնզե լարի վրա ոլորելու եղանակով, իսկ ծայրերին հագցրած է բրոնզե կլոր օղ։ Այսպիսով, ապարանջանն ունեցել է երկու գույն, որը գեղեցիկ տեսք է տվել նրան։ Սա Հայաստանից գտնված առաջին յուրօրինակ ապարանջանն է։ Այդպիսին մեզ հայտնի չէ ուրիշ երկրներից։ Ապարանջանն Ալեքսանդր Մակեդոնացու արծաթյա դրախմայով թվագրվում է IV դ. վերջով III դ. սկզբով։ Պատրաստման տեխնիկայով, այն որոշ չափով հիշեցնում է կտրվածքում քառակող ոլորած բրոնզե լարից պատրաստված կլոր ապարանջաններին (տախտ. I, նկ. 6), որոնցից հայտնաբերվել են Գառնիի սալարկղային դամբարաններից (№№ 70, 96), դրանցից մեկը (ՊՊԹ 2234/38) ներճկված մեջքով ապարանջանի հետ միասին։ Այդպիսի ապարանջաններ նույնպես առաջին անգամն են հանդիպում, սակայն այդ ձևով պատրաստված մանյակների նմուշներ շատ կան Հայաստանում։ Վերջիններս հանդես են գալիս երկաթի լայն յուրացման ժամանակաշրջանում, բայց այդպիսիք հանդիպում են նաև V—IV դարերում[27]։

---

[25] Ս. Ա. Եսայան, Հայաստանի պատմական թանգարանի բրոնզե ապարանջանները, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., № 2, 1964, էջ 91։

[26] Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները IV—VII դարերում, Երևան, 1949, էջ 88։

[27] А. О. Мнацаканян, Г. А. Тирацян, նշ. աշխ. էջ 71, տախտ. 2։

Գառնիի ապարանջաններին հար և նման քառակող ոլորած լարից պատրաստված կլոր ապարանջան հայտնի է Պերսեպոլսից[28]։

Գառնիի ապարանջանները ներճկված մեջքով ապարանջաններով և զուգահեռ նյութերով թվագրվում են V—IV դդ.։

Ինչպես տեսնում ենք վերջիններս ժամանակով ևս հեռու չեն Գեղագիրի եռանկյունաձև ապարանջանից։

Նույն սարկոֆագից հայտնաբերվել է նաև չորս ուլունք և մեկ ապակյա բազմանիստ կնիք։ Ուլունքներից երկուսը քարից են, գնդաձև, նրանցից փոքրիկը պատրաստված է կարմրավուն սերդոլիկից, մեծը սպիտակ բյուրեղից։ Ապակյա ուլունքները տակառաձև են, պատրաստված երկնագույն, կաթնագույն ապակուց։

Հատուկ ուշադրության է արժանի ապակյա բազմանիստ կնիքը (նկ. 4)։ Մուգ մանուշակագույն ապակուց պատրաստված կնիքը երկայնքից կոտրված է (երկ. 15 մմ, լայն. 15 մմ, բարձր. 8 մմ, անցքի լայն. 2 մմ)։ Ներքին մակերեսում պատկերված է դեպի ձախ արագ վազող, գավակին թռչուն կանգնած ձի։ Ձիու դավակը ոտքերի հետ միասին և թռչունի ետևի մասը չի պահպանվել։ Ձիու ճակատից, եղջերվի եղջյուրների նման, բայց ավելի լայն, ինչ որ ձվաձև թմբիկ է ձգվում։ Ձին, ոտքերը բաց վիճակում առաջ է պարզել։ Կենդանու մարմնի համաչափությունը լավ է վերարտադրված։ Ձնայած մանրամասների նրբին մշակմանը, կենդանիների գլուխները դինամիկ չեն։ Թռչունի միայն կուրծքն ու գլխի առջևի մասն է երևում, այնպես, որ ավելին նկատել հնարավոր չէ։ Գեղագիրի բազմանիստ կնիքը իր սյուժեով, գեղարվեստական ոճով և պատրաստման տեխնիկայով անտարակույս կապվում է հունա-պարսկական կնիքների խմբի հետ և ընդօրինակված է այդ խմբի քարե կնիքից[29]։ Նույն սարկոֆագից գտնված Ալեքսանդր Մակեդոնացու դրամով այն նույնպես թվագրվում է IV դարի վերջով և III դարի սկզբով։

Այսպիսով, Գեղագիրի մ. թ. ա. V—III դդ. թվագրվող սարկոֆագներից հայտնաբերված նյութերը ցույց են տալիս Հայաստանի տվյալ ժամանակաշրջանի նյութական մշակույթի տակավին քիչ հայտնի որոշ ճյուղերի զարգացման նկատելիորեն բարձր աստիճանը, հարևան ժողովուրդների հետ ունեցած կապերն ու փոխհարաբերությունները։ Քննության առնված նյութերից ներճկված մեջքով առյուծի ոճավորված գլխով ապարանջանները[30], պորֆիրիտից և կոնգլոմերատից պատրաստված բարձր ոտքով սկահակները, ապակյա բազմանիստ կնիքը սերտորեն առնչվում են աքեմենյան և փոքրասիական ժողովուրդների մշակույթի հետ։

---

[28] Persepolis, II, տախտ. 46.

[29] Հայաստանից հայտնաբերված քարե և ապակե բազմանիստ կնիքների մասին տես Г. А. Тирацян, Опыт периодизации истории материальной культуры древней Армении. ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), № 2, 1957, էջ 81—82, Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանում հայտնաբերված բազմանիստ կնիքները, «Պատմա-բանասիրական հանդես», № 1, 1965, էջ 271—277, այդ մասին գրականությունը տես նույն տեղում։

[30] Ներճկված մեջքով ապարանջանների և ընդհանրապես մ. թ. ա. V—IV դդ. Հայաստանի և Անդրկովկասի նյութական մշակույթի որոշ գծերի մասին տես Г. А. Тирацян, Некоторые черты материальной культуры Армении и Закавказья V—IV вв. до н. э., „Советская Археология", № 3. 1964, стр. 64—78.

Ж. Д. ХАЧАТРЯН

АРХЕОЛОГИЧЕСКИЕ НАХОДКИ В ГЕХАДИРЕ

Резюме

В 1963 году во время земляных работ в селе Гехадир, расположенном в 15 км от Еревана по дороге в Гарни, были обнаружены четыре саркофага длиной от 1—1,30 м, шириной 0,55—0,65 м, глубиной 0,34—0,45 м (рис. 1).

В саркофаге № 1 была найдена порфиритовая ваза. Фрагменты аналогичных ваз известны в Армении из раскопок в Гарни, Армавире, Ацабане. Обнаруженные в раннеармянском и эллинистическом слоях, они датируются V-III вв. до н. э. Гехадирская ваза датируется V-IV вв. до н. э. (рис. 2). Этим же временем датируется ваза, найденная в Нагорном Карабахе (рис. 3).

В саркофаге № 2 обнаружен бронзовый браслет с прогибом, концы которого украшены сильно стилизованными львиными головами (табл. 1, рис. 1).

На основании аналогичного гарнийского (табл. 1, рис. 2) и других браслетов, найденный нами экземпляр датируется V—VI вв. до н. э. К этому же времени относится браслет, украшенный змеиными головами (табл. 1, рис. 3), происходящий из Ноемберяна и браслеты из скрученных бронзовых проволок из Гарни (табл. 1, рис. 6).

В саркофаге № 3 были обнаружены кувшин (эйнохоя) и железные четырехгранные наконечники стрел (рис. 4,5), датируемые IV—III вв до н. э.

В саркофаге № 4 были обнаружены стеклянная многогранная печать, шаровидные, хрустальные и сердоликовые бусы, стеклянные бочковидные бусы и браслет, изготовленный из сплетенных бронзовых и железных проволок, что впервые наблюдается в Армении. Весь комплекс датируется на основании серебрянной драхмы Александра Македонского концом IV и началом III вв. до н. э. (табл. 1, рис. 5). К этому же времени относится бронзовый браслет с прогибом из Гарни (табл. 1, рис. 4).

Таким образом, материал из саркофагов Гехадира относится к малоизученному периоду истории Армении—V—III вв. до н. э. и имеет связь с ахеменидским и малоазийским миром.